# «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

«  »_____ 2025 թվականի N ___ - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 596-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով <Նորմատիվ իրավական ակտերի մասին> օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի <Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին> N 596-Ն որոշման.

**1) Հավելված N1-ի 4-րդ կետի 19-րդ ենթակետը** <հարցման հիման վրա> բառերից հետո լրացնել <, ընդ որում, Հայաստանի Հանրապետության պետական և համայնքային միջոցների հաշվին իրականացվող շինարարական ծրագրերի տեխնիկական պայմանների ձեռքբերումը մինչև նախագծային փաստաթղթերի մշակման աշխատանքների մեկնարկն իրականացվում է բացառապես ծրագրերի պատվիրատու հանդիսացող պետական մարմինների և համայնքների կողմից> բառերով,

**2) Հավելված N3-ի 7-րդ կետը**՝ «էլեկտրոնային ստորագրությամբ» բառերից հետո լրացնել «կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ

սահմանված խիստ նույնականացման այլ գործիքների կիրառմամբ» բառերով,

**3) Հավելված N4-ի Ցանկ N1-ի 7-րդ կետի 12-րդ ենթակետի** վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <12) էլեկտրամատակարարման (էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) վերգետնյա համակարգեր՝>,

**4) Հավելված N4-ի Ցանկ N1-ի 7-րդ կետի 12-րդ ենթակետը** <է.> պարբերությունից հետո լրացնել <ը.>, <թ.>, <ժ.>, <ժա.>, <ժբ.> պարբերություններով, հետևյալ բովանդակությամբ.

<ը. վնասված խողովակաշարերի վերականգնում մինչև 10.0գծմ երկարությամբ,

թ. փտած, վնասված հենասյուների փոխարինում,

ժ. բաշխիչ պահարանների և արկղերի փոխարինում,

ժա. վնասված մալուխների, տեխնիկական սարքերի փոխարինում,

ժբ. վնասված մալուխային ելքերի վերանորոգում:>,

**5) Հավելված N4-ի Ցանկ N1-ի 7-րդ կետը** լրացնել նոր՝ 13-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ. <13) կապի (հեռահաղորդակցության և ազդանշանային համակարգեր, հաղորդակներ, ընդունիչներ, անտենաներ, ուժեղարարներ) վերգետնյա համակարգեր՝

ա. դիտահորերի վերանորոգում, դիտահորերի վնասված ծածկերի և մտոցների փոխարինում,

բ. վնասված խողովակաշարերի վերականգնում մինչև 10.0գծմ երկարությամբ,

գ. փտած, վնասված հենասյուների փոխարինում, թեքված հենասյուների ուղղում, կախված մալուխների վերաձգում,

դ. բաշխիչ պահարանների և արկղերի փոխարինում,

ե. վնասված մալուխների, տեխնիկական սարքերի փոխարինում,

զ. վնասված մալուխային ելքերի վերանորոգում:>,

**6) Հավելված N4-ի Ցանկ N2-ի 3-րդ կետի 1-ին ենթակետի** <գ.> պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ <գ. առևտրի, հանրային սննդի և կենցաղային սպասարկման շենքերն ու շինությունները (այդ թվում՝ էլեկտրամոբիլների լիցքավորման վերգետնյա կայանների (տերմինալների) տեղակայում (կառուցում)՝ երեքը չգերազանցող քանակով)՝ բացառությամբ բենզալցակայանների և գազալցակայանների>,

**7) Հավելված N4-ի Ցանկ N2-ի 3-րդ կետի 1-ին ենթակետից** հետո լրացնել նոր՝ 1.1-ին ենթակետ՝ հետևյալ բովանդակությամբ. <1.1) բազմակի օգտագործման

օրինակելի նախագծերով նախատեսված, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպության դրական եզրակացությամբ երաշխավորված բջջային կապի դաշտային (բազային) կայանքների տեղադրման, նորոգման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N638-Ն որոշմամբ նախատեսված դեպքերի)>,

**8) Հավելված N4-ը Ցանկ N2-ից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ Ցանկ N2.1-ով՝**

**<ՑԱՆԿ N2.1**

**ՄԻՋԻՆԻՑ ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ (III ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ) ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ**

1. Միջինից բարձր ռիսկայնության աստիճան ունեցող (II և IV կատեգորիաների ռիսկայնության օբյեկտների դասինչպատկանող, սակայն այդ միջակայքում բնութագրային ցուցանիշներ ունեցող բնակելի և հասարակական նշանակության) օբյեկտների նախագծային փաստաթղթերը ենթակա են քաղաքաշինական պարզ փորձաքննության:

2. Միջինից բարձր ռիսկայնության (III կատեգորիայի) օբյեկտներն են՝

1) հաստատված նախագծերով նախատեսված, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման և հանրային առողջության բնագավառում գործունեություն իրականացնող պետական կազմակերպության դրական եզրակացությամբ երաշխավորված բնակելի նշանակության օբյեկտներում (բազմաբնակարան շենքերի, անհատական բնակելի տների, հասարակական և արտադրական օբյեկտների տանիքներում) բջջային կապի բազային կայանքների (ալեհավաքների) տեղակայման, նորոգման, արդիականացման աշխատանքներ (բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N638-Ն որոշմամբ նախատեսված դեպքերի),

2) էլեկտրամոբիլների լիցքավորման վերգետնյա (երեքը գերազանցող քանակով) կայանների (տերմինալների) տեղակայման (կառուցման) աշխատանքներ,

3) հեռահաղորդակցության բաշխիչ (երկրորդային) ցանցերի կառուցման, գոյություն ունեցող ենթակառուցվածքների ընդլայնման, վերազինման և հիմնանորոգման աշխատանքներ,

4) 3 վերգետնյա և մեկ ստորգետնյա հարկ ունեցող՝ անհատական բնակելի տների և սակավահարկ բազմաբնակարան (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) շենքի կառուցման, վերակառուցման աշխատանքներ՝ բացառությամբ թաղամասերի կառուցապատման նախագծերով իրականացվող

աշխատանքների,

5) II և IV կատեգորիաների ռիսկայնության օբյեկտների դասին չպատկանող, սակայն այդ միջակայքում բնութագրային ցուցանիշներ ունեցող հասարակական (այդ թվում՝ բազմաֆունկցիոնալ) նշանակության շենքերի կառուցման և վերակառուցման աշխատանքներ:>:

**9) Հավելված N4-ի Ցանկ N3-ի 4-րդ կետի 1-ին ենթակետը** <իգ.> պարբերությունից հետո լրացնել նոր՝ <իդ.> պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. <իդ. էլեկտրամոբիլների լիցքավորման ստորգետնյա կայաններ (տերմինալներ):>,

**10) Հավելված N4-ի Ցանկ N3-ի 4-րդ կետի 3-րդ ենթակետը** <զ.> ենթակետից հետո լրացնել նոր՝ <է.> պարբերությամբ՝ հետևյալ բովանդակությամբ. <է. Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 2-ի N638-Ն որոշման հավելվածով սահմանված օբյեկտները:>,

**11) Հավելված N 5-ում** <Հաշմանդամների> և <հաշմանդամների> բառերը փոխարինել համապատասխանաբար՝ <Հաշմանդամություն ունեցող անձանց> և <հաշմանդամություն ունեցող անձանց> բառերով,

**12) Հավելված N 5-ի**

ա. N2-5 ձևի 1-ին կետի 1-ին ենթակետը, <պայմանագրի համաձայն> բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ. (միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1615-Ն որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ գլխով սահմանված դեպքերում, գլխավոր կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը և պայմանագրի տվյալները կարող են չլրացվել),

բ. N2-5 ձևի 1-ին կետի 1-ին ենթակետի <շինարարական աշխատանքների կապալառուի> բառերը փոխարինել <գլխավոր կապալառուի> բառերով:

գ. N2-5 ձևի 1-ին կետի 2-րդ ենթակետի <կամ՝ (լրացվում է ռիսկայնության II կատեգորիայի օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրով փոխարինվելու դեպքում)> բառերը փոխարինել <կամ՝ (լրացվում է միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտների շինարարության որակի տեխնիկական հսկողությունը՝ շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորագրով փոխարինվելու դեպքում կամ չի լրացվում՝ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1615-Ն որոշմամբ հաստատված ցանկի 4-րդ գլխով սահմանված դեպքերում)>,

դ. N2-5 ձևի 1-ին կետի 2-րդ ենթակետի <նշել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորության պայմանագրի համարը> բառերը փոխարինել <նշել շինարարական աշխատանքների պատասխանատու կապալառուի երաշխավորագրի ամսաթիվը,համարը> բառերով,

ե. N3-1 ձևի 3-րդ կետը <կողմից> բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ. <(միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1615-Ն որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ գլխով սահմանված դեպքերում, գլխավոր կապալառուի անվանումը կարող է չլրացվել)>,

զ. N3-2 ձևի 3-րդ կետը <կողմից> բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ. <(միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1615-Ն որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ գլխով սահմանված դեպքերում, գլխավոր կապալառուի անվանումը կարող է չլրացվել)>,

է. N3-3 ձևի 4-րդ կետը <կողմից> բառից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ. <(միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1615-Ն որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ գլխով սահմանված դեպքերում, գլխավոր կապալառուի անվանումը կարող է չլրացվել)>,

ը. N 3-2-1 ձևը <Ենթակապալառու կազմակերպություն> պարբերությունից հետո, լրացնել հետևյալ բովանդակությամբ. <(միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1615-Ն որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ գլխով սահմանված դեպքերում, գլխավոր կապալառուի և ենթակապալառուի անվանումները կարող են չլրացվել)>,

թ. N 3-2-1 ձևի <Այլ շահագրգիռ կազմակերպություններ> պարբերության 3-րդ կետի <Տեխնիկական հսկողությունը փոխարինվել է շինարարական աշխատանքների կապալառուի _____ N_____ երաշխավորագրով (կցվում է)> բառերը փոխարինել <Միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) օբյեկտների տեխնիկական հսկողությունը փոխարինվել է շինարարական աշխատանքների կապալառուի _____ N_____ երաշխավորագրով (կցվում է) կամ չի լրացվում՝ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1615-Ն որոշմամբ հաստատված ցանկի 4-րդ գլխով սահմանված դեպքերում)>,

ժ. N 3-2-1 ձևի <Հանձնաժողովն արձանագրեց, որ՝> պարբերության 1-ին կետը <շինարարական աշխատանքներն ավարտված> բառերից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ. <(միջին ռիսկայնության աստիճանի (II կատեգորիայի) դասակարգում ունեցող օբյեկտների համար՝ ՀՀ կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 22-ի N 1615-Ն որոշմամբ հաստատված ցանկի 3-րդ գլխով սահմանված դեպքերում, գլխավոր կապալառուի անվանումը, շինարարական կապալի պայմանագրի N-ը կարող են չլրացվել)>:

2. Սահմանել, որ սույն որոշման պահանջները չեն տարածվում մինչև սույն

որոշումն ուժի մեջ մտնելը սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական ծրագրերի (նախագծային և շինարարական) գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: